Որմնադրությանը

Logia Urartu Nº 442

Ազատ և ընդունված մասոններ
www.logiaurartu.org.ar

Ազատ Որմնադրություն.

Ազատ Որմնադրությունն (Մասոնականություն) իր էությամբ իմաստասիրական, մարդասիրական և առաջադիմական կազմակերպություն է:

Այն *իմաստասիրական* է, քանի որ մարդուն ուղղում է դեպի Բնության օրենքների խելամիտ ուսումնասիրություն, դրդում է ջանք գործադրել միտքը զարգացնելու համար՝ որպեսզի վերլուծել ու հասկանալ կարողանա իր շրջապատող աշխարհը՝ սկսած երկրաչափական խորհրդանշական արտահայտչաձևերից՝ մինչև մետաֆիզիկական վերացականություն; դրդում է իմաստասիրական մտորումների, ջանում թափանցել էության մեջ, ըմբռնել Պատմության ընթացքի հոգևոր իմաստը, պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում տեսնում է ոգևորության նոր գաղափարական աղբյուրներ և յուրաքանչյուր իմաստասիրական համակարգից ընդունում ու յուրացնում այն ամենն, ինչը որ կարող է օգնել հասնելու համար ժամանակից ու տարածությունից էլ վեր գտնվող Վերացական Ճշմարտությանը:

Ազատ Որմնադրությունը նաև մարդասիրական է, քանի որ այն վեհանձնական է, այն ցանկանում է բոլոր մարդկանց բարեկեցությունը, չի ուղղված նեղ անձնական շահին: Նրա բոլոր ջանքերն ու միջոցներն ուղղված են մարդ արարածի զարգացմանն ու երջանկությանն՝ առանց ազգային, ռասայական, սեռական կամ կրոնական խտրականության, այդ իսկ պատճառով ձգտում է հեգևոր աճի և խղճի հանգստության: Որմնադիրների կարգին պատկանող որոշ առաքյալներ խիստ ամփոփ ձևով արտահայտել են Որմնադրությանն ուժ տվող տիեզերական ոգին.«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է՝ երկրագնդով մեկ սփռված; բոլոր ազգերը եղբայրներ են և պետք է սիրեն միմյանց որպես այդպիսիք»: «Դժբախտ են անգութները, որոնք դաժան փառքի են ձգտում իրենց եղբայրների արյան գնով†» (Ռամսեյ, 1725):

Որմնադրությունն առաջադիմական է, քանի որ այն սովորեցնում և գործադրում է մարդկային համերշխություն ու խղճի բացարձակ ազատություն: Որմնադրության նպատակը Ճշմարտության որոնումն է, բացառելով մոլեռանդությունը և՝ առանց նախապաշարումների, ընդունելով մարդկային մտքի արգասիք հանդիսացող ամեն մի օգտակար նորամուծություն; ուսումնասիրում է բարոյականությունն ընդհանրապես և սերմանում արվեստ ու գիտություն; ոչ մի արգելք չի ստեղծում Ճշմարտության որոնման ճանապարհին: